# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2014 թվականի N 1460 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի, 23-րդ հոդվածի 3-րդ մասի և 2014 թվականի ընթացքում «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության ջրանցքներում ինքնահոս ջրի դեֆիցիտը լրացնելու, ինչպես նաև նշված ջրաքանակն ինքնահոս եղանակով հաշվառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1414-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

2. Արարատյան դաշտում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ համակարգերի ներդրմամբ ցուցադրական տնտե-

սությունների հիմման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը 2014 թվականին հատկացնել 1,380.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածով):

3. «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց փոխհատուցում տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին 2014 թվականին հատկացնել 124,686.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով):

4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝ «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ նախատեսված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագիր:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. դեկտեմբերի 20
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1460 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | | | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) |
|---|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | | տարի |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | 0.0 |
| | | | այդ թվում՝ | |
| 04 | | | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | (1,380.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | 02 | | Գյուղատնտեսություն, անտառային տնտե-սություն, ձկնորսություն և որսորդություն | (1,380.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | Գյուղատնտեսություն | (1,380.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | | 07. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում | (1,380.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | | | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | (1,380.0) |
| | | | որից՝ | |
| | | | Առողջապահական և լաբորատոր նյութեր | (1,380.0) |
| 11 | | | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 1,380.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 1,380.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 1,380.0 |
| | | | 01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 1,380.0 |
| | | | ՀՀ կառավարություն | 1,380.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1460 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(հազ. դրամ)

| Գնման առարկայի | | | | | | | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) |
|---|---|---|---|---|---|---|---|
| կոդը | անվանումը | | գնման ձևը | չափի միա-վորը | միավորի գինը | քանակը | |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | | | | |
| Բաժին N 04 | Խումբ N 02 | Դաս N 01 | Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում | | | | (1,380.0) |
| **ՄԱՍ I. ԱՊՐԱՆՔՆԵՐ** | | | | | | | (1,380.0) |
| 33651690/1 | անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր | | ՇՀ | դոզա | | | (1,380.0) |
| Բաժին N 11 | Խումբ N 01 | Դաս N 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | | |
| **ՄԱՍ II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | | | | | | 1,380.0 |
| 71242000-1 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | | ԲԸՀ | դրամ | 1380000 | 1 | 1,380.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1460 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

| Չափորոշիչներ | | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|
| | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | ֆինանսական ցուցանիշներ |
| | | տարի | տարի |
| **ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները**<br>**1. Քաղաքականության միջոցառումներ**<br>**1.1. Ծառայություններ** | | | |
| Ծրագրային դասիչը | Անվանումը<br>Պատվաստանյութերի ձեռքբերում | | |
| 1116 ԱԾ03 | Նկարագրությունը<br>Անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար պատվաստուկների ձեռքբերում | | |
| Քանակական | Մշակված չէ | 0 | 0.0 |
| Որակական | Մշակված չէ | 0 | 0.0 |
| Ժամկետայնության | Մշակված չէ | 0 | 0.0 |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | x | (1,380.0) |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>1116 Անասնաբուժական ծառայություններ | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Անասնահամաճարակային կայուն ֆոնի ապահովում | | | |
| Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)<br>Պետական գնումների սահմանված կարգով մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություններ | | | |

| Ծրագրային դասիչը | | Անվանումը<br>Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում<br><br>Նկարագրությունը<br>Արարատյան դաշտում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ համակարգի ներդրմամբ ցուցադրական տնտեսությունների հիմնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | | |
|---|---|---|---|---|
| 1179 | ԱԶ02 | | | |
| Քանակական | | Նախագծանախահաշվային փաստաթղթեր (փաթեթ) | 1 | 0.0 |
| Որակական | | Փորձաքննության անցկացում | դրական եզրակացություն | 0.0 |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | | x | 1,380.0 |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>1179 Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում | | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Ջրի խնայողաբար օգտագործում, կորուստների էական կրճատում, հողօգտագործումից ստացվող արդյունքների բարելավում | | | | |
| Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)<br>Պետական գնումների սահմանված կարգով մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններ | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԴ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1460 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ
N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

**Բաժին 2.**

**Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը**

| Ծրագրային դասիչը | | Գործառական դասիչը (բաժինը/խումբը/դասը) | Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) |
|---|---|---|---|---|
| ծրագիրը | միջոցառումը | | | ՀՀ 2014 թվականի պետական բյուջե (հազ. դրամ) |
| 1116 | | | ԾՐԱԳԻՐ | |
| | ԱԾ03 | | Պատվաստանյութերի ձեռքբերում | (1,380.0) |
| | | | Մատուցվող ծառայության նկարագրությունը<br>Անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար պատվաստուկների ձեռքբերում | |
| | | | Ծառայություն մատուցողի անվանումը<br>Պետական գնումների սահմանված կարգով մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններ | |
| 1179 | | | ԾՐԱԳԻՐ | |
| | | | Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում | |
| | | | Ծրագրի նկարագրությունը<br>Արարատյան դաշտում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ համակարգի ներդրմամբ ցուցադրական տնտեսությունների հիմնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | 1,380.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Ջրի խնայողաբար օգտագործում, կորուստների էական կրճատում, հողօգտագործումից ստացվող արդյունքների բարելավում | |
| | | | Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ | |
| | ԱՁ02 | | Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում | 1,380.0 |
| | | | Մատուցվող ծառայության նկարագրությունը<br>Արարատյան դաշտում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդյունավետ համակարգի ներդրմամբ ցուցադրական տնտեսությունների հիմնման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԴ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1460 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.33 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե**

| Չափորոշիչներ | | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | |
|---|---|---|---|
| | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | ֆինանսական ցուցանիշներ |
| | | տարի | տարի |
| **ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները**<br>**1. Քաղաքականության միջոցառումներ**<br>**1.1. Ծառայություններ** | | | |
| Ծրագրային դասիչը | Անվանումը<br>Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում | | |
| 1004 ԱԾ01 | Նկարագրությունը<br>«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց փոխհատուցում | | |
| Քանակական | Ջրամատակարարման ծավալը (մլն խոր. մ) | 7.2 | |
| Որակական | Մշակված չէ | | |
| Ժամկետայնության | Մշակված չէ | | |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | x | 124,686.0 |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>Աջակցություն ոռոգման ծառայություններին (1004) | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Ջրամատակարարման ծառայությունների հուսալիության և մատչելիության ապահովում | | | |
| Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)<br>Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1460 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

**Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե**

**Բաժին 2.**

**Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը**

| Ծրագրային դասիչը | | Գործառական դասիչը (բաժինը/խումբը/դասը) | Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) |
|---|---|---|---|---|
| ծրագիրը | միջոցառումը | | | ՀՀ 2014 թվականի պետական բյուջե (հազ. դրամ) |
| 1004 | | | ԾՐԱԳԻՐ | |
| | | | Աջակցություն ոռոգման ծառայություններին | 124,686.0 |
| | | | Ծրագրի նկարագրությունը<br>Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների սուբսիդավորում | |
| | | | Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Ոռոգման ծառայությունների հուսալիության և մատչելիության ապահովում | |
| | | | Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ | |
| | ԱԾ01 | | Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում | 124,686.0 |
| | | | Մատուցվող ծառայության նկարագրությունը<br>«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց փոխհատուցում | |
| | | | Ծառայություն մատուցողի անվանումը<br>Ջրառ իրականացնող կազմակերպություններ | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1460k.voroshum.doc